# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
# № ԷԱՃԱՊՁԲ-9/11-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան

03 -ը ապրիլի 2019թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և **«Արֆարմացիա» ՓԲԸ-ն**՝ ի դեմս ընկերության տնօրեն **Ա. Հովհաննիսյանի**, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, այսուհետև՝ «Վաճառող», երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով **26.02.2019թ.** կնքված № ԷԱՃԱՊՁԲ-9/11-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.15 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով Ապրանքների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելված № 1-ի և 2-ի:

1.2 Վաճառողը պարտավորվում է սույն Համաձայնագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին(այսուհետև՝ Ստացող) մատակարարել՝ Պայմանագրի տեխնիկական բնութագրերով նախատեսված ապրանքներ (այսուհետև՝ Ապրանք)՝ համաձայն № 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ հավելված N 2-ով, նախատեսված ժամանակահատվածում:

## 2. Գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է ***10,077,000 (տասը միլիոն յոթանասունյոթ հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն***, որը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ նաև հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետով նախատեսված կարգով, բայց ոչ ուշ, քան 10.12.2019թ.:

## 3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4 Սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագիրը կազմված է 2 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N 1 և 2 Հավելվածները հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.6 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչությունը:

## 4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | **«Արֆարմացիա» ՓԲԸ** |
| ք. Երևան Բագրևանդի 5 | **Ք. Երևան, Րաֆֆու 111** |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | **«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ** |
| Հ/Հ 900011144129 | **Հ/Հ 163008100220** |
| ՀՎՀՀ 02522157 | **ՀՎՀՀ 02505735** |
| ՀՀ պաշտպանության նախարարության | **տնօրեն** |
| ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ | |
| Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ | Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ |

Հավելված N 1
N ԷԱՃԱՊՁԲ-9/11-1 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Ապրանքի անվանում | Չ/Մ | Քանակ | Միավորի գինը /դրամ/ | Ընդհանուր գումար /դրամ/ | Ապրանքների մատակարարումը 2019թ., ըստ համապատասխան եռամսյակների | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | 2-րդ եռամսյակ, | 3-րդ եռամսյակ, | 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 29.11.19թ |
| 1. | Ազիթրոմիցին, azithromycin | հատ | 18,000 | 294.00 | 5,292,000 | 9,000 | | 9,000 |
| 2. | Ցիպրոֆլոքսացինի հիդրոքլորիդ, ciprofloxacin hydrochloride | հատ | 150,000 | 31.90 | 4,785,000 | | 75,000 | 75,000 |
| **Ընդամենը** | | | | | **10,077,000** | | | |

Հավելված N 2
N ԷԱՃԱՊՁԲ-9/11-1 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Հ/հ | Ապրանքի անվանում | CPV կոդ | Ընդհանուր գին ՀՀ /դրամ/ | Վճարումը նախատեսվում է իրականացնել 2019թ., համապատասխան ըստ ամիսների, այդ թվում՝ | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 10.12.19թ. |
| 1. | **Ազիթրոմիցին j01fa10, s01aa26** /Ազիթրոմիցին, azithromycin/ | 33651125/511 | 5,292,000 | 2,646,000 | 2,646,000 | 2,646,000 | 2,646,000 | 2,646,000 | 2,646,000 | 5,292,000 | 5,292,000 | 5,292,000 |
| 2. | **Ցիպրոֆլոքսացին j01ma02, s01ae03, s02aa15, s03aa07** /Ցիպրոֆլոքսացինի հիդրոքլորիդ, ciprofloxacin hydrochloride/ | 33651134/517 | 4,785,000 | 0 | 0 | 0 | 2,392,500 | 2,392,500 | 2,392,500 | 4,785,000 | 4,785,000 | 4,785,000 |
| **Ընդամենը** | | | **10,077,000** | **2,646,000** | **2,646,000** | **2,646,000** | **5,038,500** | **5,038,500** | **5,038,500** | **10,077,000** | **10,077,000** | **10,077,000** |

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

**ԳՆՈՐԴ**

ՀՀ պաշտպանության նախարարության
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Արֆարմացիա» ՓԲԸ
տնօրեն

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ